

ՏԵԶԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻՆ ԳԼՏԻՈՒԷՆ Հ.Բ.ՇՄՈՒԹԵՆԸ




مَجَلَّةُ جَمْعِيَّةِ الْقَاهِرَةِ الْأَزْمِينِيَّةِ الْعَامَّةِ

مَجَلَّةُ جَمْعِيَّةِ الْقَاهِرَةِ الْاَزْمِينِيَّةِ الْعَامَّةِ

ԻԳ ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1979 - ՅՈՒՆԻՍ 1980

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ



ՇԱՆԹ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Քոմպոզիսիոն տասնըվեց պատտոներով 150սմ. x 180սմ.

ներկուած կտաւ, կոււաշ եւ մատիտ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Այս թիւով

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՏԻԿԻՆ ՍԱԹԵՆԻԿ ՃԱՆԻԿ ՉԱԳԸՐԻ ՀԵՏ Երիտասարդական Տեղեկատու	էջ 3
ԵՐԲ ԵՐԱԶԸ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ Սօսի նէրէտեան	էջ 5
ԵՐԿՈՒ ՓՈՐՉ Գրիգոր Միքայէլեան	էջ 6
Կ՛ԵՐԹԱՍ ՆՈՐՈՒԹԵԱՆ ԾԱՐԱԽՈՎ Նայիրի Համբիկեան	էջ 7
ԻՄ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՍ Վանիա Էքսէրժեան	էջ 8
ԵՐԿՈՒ ՆԿԱՐ ՍԻԼՎԱՅԷՆ Սիլվա նէրէտեան	էջ 9
ՇԱՆԹ ԱԻԵՏԻՍԵԱՆԻ ԷԼ ՔԱՍՐ ՆԿԱՐԱՇԱՐԸ Սիրվարդ Զարեան-Քէօսէեան	էջ 10
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԺԻՐԱՅՐ ՏԵՓՈՅԵԱՆԻ ՀԵՏ Գէորգ Բրուտեան	էջ 12
ԷԼ ՏԱՐՊ ԷԼ ԱՀՄԱՐ Սօսի նէրէտեաս	էջ 14

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԲԱՐԵՐԱՐՈՒՅԻ ՏԻԿ. ՍԱԹԵՆԻԿ ՃԱՆԻԿ ՉԱԳԸՐԻ ՀԵՏ

Հ.Բ.Ը.Մ.ի երիտասարդներս, նախապէս առնուած ժամադրութենէ մը ետք, այգելե-ցինք Տիկին ծանիկ Չագրրի բնակարանը, ուր ունեցանք մտերմիկ գրոյց մը:

Տիկին Չագրր կը բնակի առանձին, իր Չամալէքի վիլլային մէջ, որ շրջապատուած է գեղեցիկ ու խնամուած պարտէզով մը: Տունը թանգարան մըն է, Տիկին Չագրր՝ արուեստագիտուհի մը, որուն չեն պակսիր նաեւ կեանքն ու երեւոյթները դիտելու իւրայատուկ ձեւ մը:

- Տիկին Չագրր, կարելի՞ է իմանալ թէ ու՞ր ծնած եւ մինչեւ Գահիրէ ձեր հաստատուիլը ու՞ր ապրած էք:

- Ծնած եմ Պոլիս՝ Գատրգիւղ: Թէ՛ հօրս գործին փոխադրութեան եւ թէ՛ ջարդերուն պատճառաւ՝ տեղափոխուեցանք Անգլիա՝ Մանչեսթր: Մանկութիւնս եւ երիտասարդու-թեանս մէկ մասը անցուցած եմ Անգլիոյ մէջ: 21 տարեկանիս հայրս կորսնցուցի եւ մինչեւ եգիպտոս հարս գալս՝ մնացի մօրս եւ եղբօրս հետ:

- Տիկին Չագրր, ուրեմն ձեր կազմաւորման շրջանը անցուցած էք Անգլիա, այն ստեն ի՞նչպէս կ'ըլլայ որ այսքան լաւ հա-յերէն կը խօսիք:

- Հայերէնս կը պարտիմ հօրս: Հայրս օրական ժամ մը կը յատկացնէր ինծի հայե-րէն սորվեցնելու: Հայրս էր որ ինծի ներ-շնչեց հայ ըլլալու հպարտութիւնը, հակա-ռակ այն ժամանակուան՝ հայերուս հանդէպ եղած օտարներու արհամարհական վերաբեր-մունքին:

- Ձեր երիտասարդութեան շրջանին սո-վորական երեւոյթ չէր իզական սեռին ուսում ստանալը: Ու՞ր եւ ի՞նչպէս ըստա-գած էք ձեր ուսումը:

- Ուսումը միայն դպրոցներուն մէջ չէ որ կը գտնուի: Կեանքը ինքնին մեծ դպրոց մըն է: Գալով լեզուներուն, անգլերէնս սորվեցայ ինքնաբերաբար, Անգլիա ապրելուս, հայերէնը, ինչպէս ըսի, հօրս կը պարտիմ, իսկ ֆրանսերէնը սորվեցայ ինքնաշխատու-թեամբ եւ գիրք կարդալով: Սակայն լեզու-ներ գիտնալը զարգացած ըլլալ չի նշանակեր: Լեզուն պարզապէս առիթը կուտայ զարգանա-լու, որուն միակ ճամբան ընթերցումն է:

- Կրնայի՞ք պատմել ձեր անձնական կեանքէն յիշարժան դէպք մը, որ ձեր վրայ ազդած ըլլայ:

- Նոր ամուսնացած էի, եւ ամուսինս ու ես կը պատրաստուէինք եգիպտոս մեկնե-լու: Շատ նուրբ ժամացոյց մը տեսայ Անգլիա եւ ինդրեցի ամուսինէս որ գնէ, բայց ամու-սինս իսկոյն մերժեց: Ամուսինիս բնաւորու-թիւնը տակաւին լաւ չէի ծանշար, բանի որ իրարու ծանօթացած էինք նամակագրութեամբ: Ուստի շատ նեղուեցայ: Երբ Գահիրէ հասանք, ժամացոյցը արդէն հոն էր, ինչ որ զիս շատ յուզեց ...:

- Ի՞նչ կը խորհիք կիներու իրաւունք-ներու մասին:

- Կը խորհիմ որ կիները շատ լաւ կ'ը-նեն գործի լծուելով այր մարդոց կողքին: Մեր ժամանակը տարբեր էր: Չեզի դէպք մը պատմեմ: Ընկերուհիներէս մէկը Ամերիկա գնաց եւ օր մըն ալ զիս հրաւիրեց որ Ամե-րիկա այցելեմ եւ այդ առիթով իրենց օժտի գործարանն ալ տեսնեմ: 21 տարեկան էի: Մայրս ու եղբայրս անմիջապէս արգիլեցին որ Ամերիկա ծամբորդեմ: Ու՞ր տեսնուած էր որ աղջիկ մը մինակը ծամբորդէր: Սակայն այնքան տարուած էի իմ ծամբորդութեանս զողափարով, որ առանց այլեւայլի գացի եւ երկրորդ կարգի տոմսակ մը գնեցի: Անշուշտ, երբ առտուն իրենց յայտնեցի փափաքս եւ

ցոյց տուի տոմսակս, յանդիմանուեցայ :
Բայց այս դէպքը պատճառ եղաւ, որ եղբայրս
արգելք չըլլայ որ ուսումս շարունակեմ :
Ուստի, թէեւ տարիքով մեծ, երկու տարի
յամախեցի մարմնակրթանքի գոլէճը : Առաջին
համաշխարհային պատերազմի ընթացքին եղ-
բայրս կը թղթակցէր ծանիկ Չագրոյի հետ :
Ես ալ սկսայ թղթակցիլ եւ այս թղթակցու-
թեան արդիւնքը եղաւ ամուսնութիւնս :

- Բոլորս գիտենք որ արուեստագիտուհի
մըն էք : Ի՞նչպէս կազմուեցաւ ձեր մէջ
արուեստագիտական ճաշակը :

- Մանկութենէս կը սիրէի արուեստները,
մասնաւորաբար նկարչութիւնը : Մանկութեանս,
դպրոցը, յատուկ ուշադրութիւն կը դարձնէի
գծագրութեան դասերուն : Հետագային սկսայ
յամախել ցուցասրահներն ու թանգարանները :
Երբ Գահիրէ եկայ՝ նկարչութեան դաս առի
Աշոտ Զօրեանէն : Կը հիանամ Կոյայի եւ
Բէմպարանտի վրայ : Չեմ հասկնար թէ փիքա-
սոյի ինչին կը հաւնին :

- Կրնայի՞ք գիտնալ ձեր այժմու ըզբա-
ղումները :

- Ես, ինչպէս միշտ, կը կարդամ : Կար-
դալը մեծ դպրոց մըն է : Ընթերցումներուս
կողմին՝ հոգ կը տանիմ տան մաքրութեան եւ
կը խնամեմ շուններս : Տարիներ առաջ շատ կը
գրադէի արեւմուտներով : Արեւմուտական շար-
ժուումը ես հիմնեցի Եգիպտոսի մէջ :

- Ըսելիք մը ունի՞ք հայ երիտասարդ-
ներուն :

- Ոեւէ երիտասարդի կ'ըսեմ.- Կարգա,
կարգա, կարգա : Իսկ հայ երիտասարդին
կ'ըսեմ.- Քեզմով բարձրացուր հայ անունը :

Ծանչցիր քու ժողովուրդիդ պատմութիւնը եւ
միւս ժողովուրդներուն պատմութիւնները,
որպէսզի կարենաս ծանօթագնել հայը օտարին :

- Ի՞նչպէս հասած էք ձեր ներկայ բար-
գաւած վիճակին :

- Նախ աշխատելով, ապա խնայելով եւ
յետոյ խնայուած դրամս վերածելով կալուա-
ծի կամ իրեղէնի : Անշարժ կալուածները եւ
իրեղէնները իրենց արժէքը չեն կորսնցնիր,
մինչդեռ դրամը օրէ օր կ'արժեզրկուի : Այս
կալուածս տարիներ առաջ գնած եմ եւ այսօր
իր գինը հազարապատիկ աւելցած է :

- Ի՞նչ դրդապատճառներէ մղուած ձեր
կալուածը Հ.Բ.Ը.Մ.ի նեւիրեցիք :

- Առաջին. վստահութիւն ունիմ որ իմ
փափաքներս պիտի գործադրէ Հ.Բ.Ը.Մ.ը :
Երկրորդ. իմ սիրելի ամուսինս եւ
մենք ընտանեօք՝ հաւատաւոր անդամներ եւ
գործօն ժողովականներ եղած ենք այս մեծ
հիմնարկին մէջ :

Երրորդ. Հ.Բ.Ը.Մ.ը սփիւռքի մէջ
պատկառելի անուն մը եւ հաստատ կոռուան
մըն է մեր ազգապահպանման գործին համար :
Չորրորդ. զաւակ չեմ ունեցած եւ
հետեւաբար իմ զաւակս կը նկատեմ
Հ. Բ. Ը. Մ. ը :

Հակառակ իր յառաջագած տարիքին, Տիկին
Սաթենիկ ծանիկ Չագրը առոյգ է, սրամիտ եւ
լաւատես : Իր խօսակցութիւնը գիտէ համեմել
անձնական փորձառութիւններէ բխող պատմու-
թիւններով եւ հոգեբանական վերլուծում-
ներով : Զուարթ տրամադրութեամբ կը բաժնը-
ւինք իրմէ :

Երիտասարդական Տեղեկատու

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Մեզ չի միացնում այլեւս ներկան,
Գալիֆն աւելի կը նետի հեռու.
Անցեալն է մերը,
Մեր հոգիներում
Յիշատակների Զուարթ-նոցներ կան,
Եւ մեմք լաւ գիտեմք՝
Անհնարին է վերականգնելը :

Միայն կարեմանք՝
Անփոյթ մի խօսքով,
Մի կոշտ արարքով
Զեպծել, չաղարտել սուրբ խոյակները,
Նրանց պահպանել միայն կարեմանք,
Որ եթէ այցի գնանք անցեալին՝
Լուռ ծնրադրելու փաթեր ունեմանք...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ

ԵՐԲ ԵՐԱԶԸ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ



Սօսի Ներէտեան

Մանկուլթենէս ի վեր երագած էի Աթէնքը, երագած էի՝ իբրեւ հմայիչ վայր մը: Յետոյ ան եղաւ աշխարհի գրականութեան եւ արուեստի կենդրոններէն մէկը: Եկաւ ժամանակը որ Աթէնք պիտի այցելենք եւ երագս պիտի իրականանայ:

Հակառակ որ չորս ժամի ուշացում ունեցանք եւ ճամբորդութիւնն ալ բաւական անհանգիստ էր, սակայն երբ օդանաւը Աթէնք հասաւ՝ ամէն յոգնութիւն մոռցանք: Արդէն մուտք իջած էր երբ վայրէջք կատարեցինք Աթէնքի օդակայանը, ուստի մեզ ուղղակի պանդոկ առջնորդեցին, ուր անմիջապէս ընթրելէ ետք սենեակնիս քաշուեցանք: Հակառակ յոգնութեանս՝ չէի կրնար պտոկիլ, անհամբեր էի քաղաքը տեսնելու եւ չէի ուզեր ժամանակ վատնել քնանալով: Պատշգամ ելայ. չորս դին բարձր շէնքեր, ինքնաշարժներու անվերջ շարքեր եւ լոյսի ժապաւէններ ամէն կողմ: Յոգնութիւնն ու քունս զօրաւոր էին եւ ակամայ անկողին մտայ:

Առտուն, երբ աչքերս բացի, սենեակս ողողուած էր պայծառ արեւի լոյսով: «Ի՛նչ լաւ է», մտածեցի, «որ Աթէնքի առաւօտներն ալ եզրիպտոսի պէս արեւոտ են եւ ոչ թէ ուրիշ Եւրոպական երկիրներու պէս մշուշոտ ու մոայլ»: Երբ քիչ վերջ կրկին անգամ պատշգամ ելայ, քաղաքը բոլորովին տարբեր տպաւորութիւն մըն ալ ձգեց վրաս: Իսկապէս զեղեցիկ էր ինքնաշարժներու շարքը որ կ'ընթանար առանց ադմուկի ու իրարանցումի: Գեղեցիկ էին այդ լայն ու մաքուր պողոտան, մաքուր ու կոկիկ անցորդները...:

Նախաճաշելէ ետք մեզ օթօպիւսով Աքրօփօլ տարին, այցելելու համար Բարթէնօնի հոյակապ տաճարը, որ տակաւին կանգուն կը մնայ հակառակ այդքան դարեր անցնելուն: Կարծէք տարիները գլորած անցած են Աքրօփօլի ստորոտէն առանց ոչ մէկ նշան ձգելու տաճարին վրայ: Աթէնքի որեւէ մէկ անկիւնէն արդէն կ'երեւայ այդ հոյակապ կառուցուածքը, թառած Աքրօփօլի բարձունքին վրայ, որ կարծէք զարմանքով ու խղճալով կը նայի վար, իր ստորոտը ծածկող արդիական շէնքերուն, որոնք դիւրաւ կը փլին երկրաշարժէ կամ պատերազմէ, մինչդեռ ան կանգուն մնացած եւ դիմադրած է բոլոր վտանգներուն:

Երբ վերջապէս բարձրացանք Աքրօփօլէն վեր եւ կեցանք տաճարին առջեւ, տեսակ մը

պատկառանք զգացի այդ սիւներուն եւ սանդուխներուն հանդէպ: Այդ ինչ մեծ հանճար մը մտածած եւ կրգած է իրագործել այս տեսակ հրաշայի շինուածք մը այդ հին ժամանակներուն: Հակառակ մեր այսօրուան հսկայ գիւտերուն ու յառաջդիմութեան, մարդիկ կը շարունակեն գմայլանքով դիտել Բարթէնօնը: Նայուածքս վար իջեցնելով սիւներուն բարձունքէն, տեսայ մեծ թիւով զբօսաշրջիկներ, որոնք սանդուխներուն վրայ կը հանգչէին, ապաստանելով կիզիչ արեւի ճառագայթներէն, եւ առաջին անգամ ըլլալով անդրադարձայ, որ որքան քրտինք, արիւն եւ յոգնութիւն թափուած է այդտեղ դարեր առաջ: Երբ պանդոկ վերադարձանք տակաւին սրտիս մէջ կը կրէի այդ պատկառանքի զգացումը Աքրօփօլին հանդէպ:

Ուրիշ օր մը շատ հետաքրքրական պտոյտ մը կատարեցինք, գիշերային զբօսապտոյտ դէպի Բլաքա: Բլաքան Յունաստանի հնագոյն քաղաքներէն է եւ կը գրաւէ Աքրօփօլի ըստորոտին մէկ մասը: Շատ հետաքրքրական էր երեւակայել այդ պատմական քաղաքը իր իհարի օրերուն, քաղաքեւու համար զայն իր այսօրուան վիճակին հետ: Քաղաքը տակաւին պահած է իր հին, նեղ, ծուռ ու մուռ փողոցներն ու տունները: Սակայն փողոցներն ու տունները առանձին չեն կազմեր քաղաք մը, մարդոց ներկայութիւնն է կարեւորը եւ միշտ մարդիկն են որ ստեղծած են այդ մեծ տարբերութիւնը պատմականին եւ արդիականին միջեւ: Մինչ պատմական Բլաքայի ժողովուրդը զայն հռչակաւոր րրած էր իրագործած յառաջդիմութեամբ ու քաղաքակրթութեամբ, այսօրուան Բլաքայի ժողովուրդն ալ քաղաքը հանրածանօթ ըրած է սրճարաններով, մաշարաններով եւ Պուլզուքիայի նուազներով: Սակայն պէտք է ընդունիլ որ իսկապէս շատ խելացի յեղաշրջումի մը առարկայ եղած է քաղաքը, ըսել կ'ուզեմ որ եթէ քաղաքը պահուած ըլլար իր զուտ պատմական վիճակին մէջ, վստահաբար հոն յաճախող զբօսաշրջիկներուն կէսը իսկուտ պիտի տար զայն այցելելէ, մինչդեռ հիմա, Բլաքան ամէն գիշեր ողողուած է խուռներամ բազմութեամբ: Մենք ալ մաս կազմելով այդ հոծ բազմութեան սկսանք թափառիլ Բլաքայի փողոցները: Ամէն անկիւնէ եղանակի, նուազի, պարի եւ ուրախութեան ձայներ կը լսուէին: Իսկապէս որ այս Յոյները հաճոյքի ժողովուրդ են. զարմանալի կարողութիւն մը ունին ամենախղճուկ տեղն իսկ դրախտի վերածելու: Այնպիսի ոգե-



ԵՐԿՈՒ ՓՈՐՁ

Գրիգոր Միխայելեան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ոչ՝ իմ ծնունդս որոշեցի ես,
Ոչ՝ անունս,
Ոչ՝ կրօնքս:

Ու ես ծնայ՝ հայ,
Անունս՝ Գրիգոր,
Կրօնքս՝ քրիստոնեայ:

Բարեկամներ,
Կր ծանչնաք զիս,
Այդպէս կ'ապրիմ ես...

Ձեր բոլորին պէս:

Լորուծեամբ կ'երգեն ու կր պարեն՝ որ
բոլոր ներկաները կր խանդավառուին: Կր
յիշեմ, բաւական ժամանակ վերջ, երբ այլեւս
պանդուկ կր դառնայինք, պահ մը մտածել
սկսայ, թէ արդեօք ինչ պիտի զգար Բլաքայի
պատմական ժողովուրդէն անձ մը՝ եթէ առ ի
հետաքրքրուիլն գլուխը վեր բարձրացնելը իր
գերեզմանէն եւ դիտելը իր քաղաքը. զայրո՞յթ,
յուսախաբուծի՞ն, զարմանք, թէ պարզապէս
ներողամտութիւն:

Կ'ըսեն, թէ երբ երազները իրականութիւն
կր դառնան՝ կր կորսնցնեն իրենց հմայքէն
կարեւոր մաս մը: Այդպէս չեղաւ ինձի հետ:
Աթէնքը պահեց երազներուս հմայքը:

ՄԵՂՔ

Մեղք, բարի եմ, բարի:

Շատ բարեկամ ունիմ,
Շատ ընկերներ,
Բայց, մեղք, պէտք եղած ատենը միայն բարեկամ եմ,
Պէտք եղած ատենը միայն՝ ընկեր:
Խորհուրդ տուի, շատ խորհուրդ տուի,
Խորհուրդ տուի՝ երբ ես պէտք ունէի խորհուրդի:
Բոլորը սկսան հեռանալ ինձմէ,
Հեռացան ինձմէ,
Մեղք,
Մինակ մնացի,
Կորսուած,
Թերեւս կորսուած:

Մեղք, բարի եմ, բարի:

Բարկացայ,
Ընդվզեցայ,
Փորձեցի խորհուրդներս ինձի պահել՝
Չեղաւ, չկրցայ,
Տառապեցայ...:
Մեղք,
Մեղք,
Մեղք,
Բարի եմ, բարի:

Կ'ԵՐԹԱՍ ՆՈՐՈՒԹԵԱՆ ԾԱՐԱԻՈՎ



Նայիրի Համբիկեան

Այս ամառ բարեբախտութիւնը ունեցայ այցելելու ֆրանսա՝ Փարիզ եւ յետոյ Սպանիա: Ինծի համար անակնկալ մըն էր այս ծամբորդութիւնս եւ ինչպէս ամէն անակնկալ՝ իմ ծամբորդութիւնս ալ եղաւ անսպասելի ու հաճելի:

Մարտութիւնը ամենաառաջին տպաւորութիւնը կրնայ ըլլալ անոր համար որ Եգիպտոսէն կուգայ: Օղակայանէն մինչեւ տուն՝ շատ զգալի է մարտութիւնը, եւ կանաչութիւնը, որ կը տարածուի ամենուրեք, ըսելով. «Ես կանաչ եմ»: առանց գոյնի փոփոխութեան, ինչպէս Եգիպտոսի մէջ կ'ըլլայ իոշիէն: Երբ հասայ Փարիզ, կէսօր էր, օդը շատ պաղ, մինչ Գահրէ կը տարնայի՝ Փարիզի ցուրտը կը թափանցէր ոսկորներուս:

Երկրորդ տպաւորութիւնս էր փողոցներու լայնութիւնը եւ երեւութեան պարապութիւնը: Հոս մարդիկը պէտք չէ հրել քալելու համար, կամ հրուիլ՝ անոնց քալելուն արգելք չըլլալու համար: Անմիջապէս կը նշմարուի մարդոց կենցաղագիտութիւնը: Կը զգաս թէ մաքուր օդ կը շնչես:

Փարիզը հսկայ է, ոչ թէ քաղաք՝ այլ երկիր մըն է կարծէք անսահման տարածուածութեամբ, լեցուն՝ աշխարհի ամէն կողմերէն եկած այցելուներով, աշակերտներով եւ ուսանողներով:

Առաջին օրերս անցուցի մօրեղբայրներուս հետ: Յետոյ ծրագրեցի պտոյտներս: Սկսայ թանգարաններով: Ֆրանսայի մէջ ամէն մարդ գիտէ իր արուեստագէտները եւ կը հետաքրքրուի անոնցմով: Ժողովուրդը իր առօրեային հետ կ'ապրի նաեւ քաղաքին արուեստագիտական եւ մշակութային կեանքը: Ծամբաները կը քալես՝ կը նշմարես տուն-թանգարաններ, պալատներ, ցուցահանդէսներ, թատրոններ: Արուեստի շունչ մը կայ մթնոլորտին մէջ: Նոյնիսկ իանութիւններն ու ցուցահանդէսները այնքան ճաշակաւոր են, որ իւրաքանչիւրը արուեստի գործի կը նմանի:

Ֆրանսացի ժողովուրդը ընդհանրապէս սրամիտ է, բայց ոչ՝ համոյակատար, ինչպէս արեւելիկի մէջ: Ամէն մարդ իր գրադումները ունի, իր հոգերը, իր հարցերը: Ոչ որ կ'ուզէ ուրիշը հանդուրժել: Առաւօտուն գիրար կը բարեւեն, բայց, այդքան միայն, այդ մէկէն աւելին պահանջելու չէ: Այդ կողմ-

մէն պէտք է գնահատել Եգիպտոսը եւ Եգիպտացիներուն « իրարմով ապրիլը »: Այս վերջինը

Իէեւ չափէն քիչ մը աւելի՝ բայց ֆրանսայի պաղութեան բով շատ տաք երկիր է Եգիպտոսը թէ կլիմայով եւ թէ իր լայն սրտով: Քանի անգամներ փողոցը անցորդներու հարցուցի երթալիք ուղղութեանս մասին եւ սակայն կարծես պատին կը խօսիս: Ոչ մէկ պատասխան: Ամէն մարդ իր գործին ետեւէն է: Այսուհանդերձ գիտեն բարեւել ժպտուն դէմքով: Գիտեն երկու խօսքով պատմութիւն մը պատմել:

Ի վերջոյ ֆրանսայի մէջ մարդ կը զգայ ժամանակին արժէքը: Ամէն ինչ արագ է եւ կանոնաւոր: Ժշղպահութիւնը ոչ թէ օրէնք, այլ բնագոյ դարձած է:

Հանդիպեցայ նաեւ հայ երիտասարդներու, որոնք մեծամասնութեամբ հայերէն չեն խօսիր: Բայց «կ'ըսեն» թէ հոգիով հայ են, թէ հայութիւնը իրենց արիւնին մէջն է: Թէ ո՞րչափով կրնան անոնք հայ զգալ երբ կորսնցուցած են լեզուն, այդ մէկը ... Արարատը գիտէ:

Ֆրանսացիները ունին իրենց անձնական կարծիքը ամէն ինչի մասին: Ցուցահանդէսներու ժամանակ կը լսես ամէն տեսակի կարծիք, գաղափար, առանց վախի, առանց կեղծիքի՝ նոյնիսկ եթէ նկարիչը ինք եւս ներկայ է: Երեւոյթ մը որ Գահրէի մէջ դժբախտաբար կը բացակայի: Յայտնել բարձրաձայն եւ ծակատաք իր կարծիքը, բնագոյտել կամ հեզնել: Մենք Եգիպտոսի մէջ երկու լեզու կը գործածենք միայն, մին՝ գովեստի եւ միւսը՝ պարտաւի: Մին՝ երեսանց, միւսը՝ ետեւէն՝ երբ վտանգ մը չի սպառնար մեզի: Ժիշդ է որ ճշմարտութեան կրնանք հասնիլ տարբեր ծամբաներով, սակայն ոչ թէ կեղծ ու դատարկ խօսքերով:

Կը քալեմ Փարիզի փողոցներէն: Ամէն ինչ հետաքրքրական է, ճոխ կամ համեստ ցուցահանդէսներ, իանութիւններ, պիստրօներ, ճաշարաններ: Զանազան ապրանքներ՝ հագուստ, իրեղէններ ծախողները մարտաբար պերճախօսութեամբ գիս կը կանչեն: Զգոյշ եմ, կրնամ ծուղակը իյնալ, չէ՞ որ մեր դրամը իր արժէքը կորսնցուցած է այս փարթամ քաղաքին մէջ:

Կիները ոչինչ մանրամասնութիւններով գիտեն պմնուելի: Ծաշակ ունին: Գրեթէ



ԻՄ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆԱ

Վանիա Էփերճեան

Առաջին անգամն էր որ Ամերիկա կ'այցելէի, և ելի ծշգրիտ ըլլալու համար՝ Լոս Անճելոս: Այս անունը անձանօթ չէր ինձի, վաղ մանկութենէս լսած էի: Գիտէի, որ Լոս Անճելոսը գեղեցիկ քաղաք մըն է, ուր կը բնակի ամերիկայայտութեան մէկ կարեւոր հատուածը:

Սակայն, որքան ալ լսած ու կարդացած էի, իրականութիւնը տարբեր էր: Երբ օդանաւը վայրէջք կատարեց, բացազանչեցի: Այս որքան մաքրութիւն, Աստուած իմ:

Բարեկամներուս միջոցով շուտով կազմակերպեցի պտոյաներս: Անշուշտ կ'ուզէի միջավայրին ծանօթանալ, բայց ամենէն և ելի կը փափաքէի հայերու հանդիպիլ, մասնաւորաբար ինձի տարեկից տղոց եւ աղջիկներու: Կ'ուզէի գիտնալ, թէ հայ երիտասարդները ինչպէս կ'ապրին մեր ժամանակի քաղաքակրթութեան ետուն կեդրոններէն մէկուն մէջ: Վերջապէս, հայ նորահաս սերունդները որքանով կը պահեն կապը իրենց ժողովուրդին հետ:

Այս մտածումներն էին որ կ'անհանգստացնէին զիս: Եւ հաւատացէք, օրեր ետք, երբ սկսած էի ծանօնալ հսկայ Ամերիկայի հզօր կարելիութիւնները, այս մտածումներս փոխուեցան տազնայներու: Ամերիկեան քաղաքակրթութիւնը ստեղծած էր դիւրակեցութեան հրաշալի միջոցներ, որոնց պատճառով մերիկներուն մէջ նուազած էր դիմադրականութիւնը:

Հանդիպեցայ, թիւով բաւական շատ, հայ երիտասարդ-երիտասարդուհիներու: Խօսեցանք, խնդացինք, պտրտեցանք, պարեցինք, վիճեցանք, երգեցինք: Ուրախ օրեր անցուցինք: Այս բոլորէն ետք, առաջին համոզումը որ գոյացաւ մէջս եղաւ այն, որ անոնք, ամերիկահայ նորահաս սերունդները, լաւ կը ծանօնան իրենց ապրած երկիրը, տեղեակ են իրենց միջավայրի հարցերուն եւ խնդիրներուն, կ'ապրին երկրին կեանքը: Ասիկա տարօրինակ թուեցաւ ինձի: Ես, կը կարծէի, որ հայերը ո՛ր ալ ապրին, կ'ապրին իրենք իրենց կեանքով, իրենց հարցերով ու խնդիրներով: Եւ ասիկա արդէն կարեւոր տարակարծութիւններէն մէկն է հին եւ նոր սերունդներուն միջեւ: Նոր սերունդը կը նետուի՝ իր ապրած երկրին ընթեռած կարելիութիւններուն մէջ: Դժբախտաբար, սփիւռքահայ


կեանքը կը մնայ տարերային, անկազմակերպ ու նորահաս երիտասարդները կը մնան առանց ծրագրուած ուղղութեան եւ կը քշուին հոսանքն ի վար, կ'երթան, կ'երթան, կը հեռանան իրենց ժողովուրդին դարաւոր ականջութիւններէն ու աս կը ստեղծուի օտարութիւն մը, անհասկացողութեան անջրպետ մը՝ իրենց եւ նախորդ սերունդներուն միջեւ: Պատասխանատուները կը մտածեն այս մասին: Որոշ նշաններ կան թէեւ, սակայն ստեղծուած կացութեան առջեւ անհրաժեշտ են անելի հրամայական միջոցներ:

Հանդիպեցայ բազմաթիւ ամերիկածին պատանիներու, երիտասարդներու, որոնք հայերէն չէին խօսեր: Բայց հայերէն չէին խօսեր նաեւ ընդամէնը քանի մը տարի առաջ միջին ու Մերձավոր Արեւելքէն գացած տղաքն ու աղջիկները: Երբ կը հաւաքուէինք հայկական սրահներու մէջ՝ անգլերէն կը խօսէինք: Անգլերէն կը խօսէինք եւ անգլերէն կ'երգէինք: Հայերէնը կարծէք օտար լեզու ըլլար: Երբեմն կ'ըսէին, որ իրենք թէեւ անգլերէն կը խօսին, բայց հայ կը զգան: Ըսին թէ անգլերէնով գիրքեր կը կարդան հայերու մասին: Նոյնիսկ քանի մը գիրքերու անուններ տուին ինձի: Սակայն Ամերիկա կեցութեանս ընթացքին ես հաստատեցի, որ հայութեան եւ Հայաստանի մասին իրենց ունեցած տեղեկութիւնները, ծանօթութիւնները, գիտելիքները՝ անշունք ըլլալու չափ խեղճ են: Եւ եթէ կ'ըսեն թէ հայ կը զգան՝ ասիկա պարզապէս լայնու ձեւ մը թուեցաւ ինձի: Ես կը կարծեմ թէ, ան որ հայ կը զգայ, պէտք չէ ուրանայ իր լեզուն:

Երբ արդէն վերադարձած էի Եգիպտոս, ընկերներս, ծանօթներս, ազգականներս հարց կուտային ինձի, թէ պիտի ուզէի՞ Ամերիկա ապրիլ:


Պատասխանելու համար դժուար հարց մըն է ինձի համար: Նախ որ կապուած կը զգամ ծննդավայրիս Եգիպտոսին: Հոս են իմ բոլոր բարեկամներս: Ենչտուած պատճառ մը չեմ գտներ միջավայրս փոխելու: Վարժուած եմ այս կեանքին: Ես չսիրեցի Ամերիկայի մեքենական կեանքը, հեռաւորութիւնները: Յետոյ, եւ ամենէն կարեւորը, ես չեմ կրնար ինքզինքս երեւակայել խումբի մը մէջ, որ թէեւ «հայ» կը կոչուի, բայց իրականութեան մէջ՝ չէ:

ԵՐԿՈՒ ՆԿԱՐ ՍԻԼՎԱՅԷՆ



Ահ, ձիու պայտ մը: Առնեմ
պահեմ կ'ըսեն թէ բախտ կը բերէ:

Քեզի հազար անգամ չե՛մ ըսած որ
անծանօթ վարդոց նեան չընես





ՇԱՆԹ ԱԽԵՏԻՍԵԱՆԻ ԷԼ-ՔԱՍՐ ՆԿԱՐԱՇԱՐԸ

Սիրվարդ Զարեան - Քէօսէեան

Շանթ Ալեքսիսեան, շուրջ տարուան մը քաղաքացիութենէ ետք, վերադարձած է Եգիպտոս ու վերստին նուիրուած իր տարերքին: Հազիւ վերադարձած՝ իր կողմնագոյցը կ'ուղղէ դէպի եգիպտական գիւղերը: Արդիւնքը մէջտեղն է. հրաշալի նկարաշար մը՝ Էլ-Քասր:

Պատահական չէ որ Շանթի գործերուն էլէմենթը հանդիսանայ անապատային հեռաւոր գիւղ մը: Գիտենք որ ան լայնօրէն կը ծամբորդէ՝ շարունակելով իր պրպտումներն ու անոնց թելադրականութեամբ ստեղծագործելը: Այս ուսումնասիրութիւնները իր արուեստին բերին նոր ըսելիք մը՝ մարդ-հող փոխ յարաբերութիւնը: Ան կը պրպտէ անոնց ներքին կապը, ոգեկան ուժը: Մարդը ձեւաւորելով այս ուժը՝ կը մարմնաւորէ տուն, երգ կամ, այս պարագային, ճերմակ ծեփուած դղեակ մը՝ որ արուեստագէտին կիզակէտն է: Ու ահա Շանթ Ալեքսիսեան կը ձգտի մարդ - հող - ստեղծագործութեան կապի իրագործման:

Շանթի Էլ-Քասր նկարաշարը իրագործուած է մատիտով, գոլաժներով, ջրաներկով, ներկուած պաստառներով, իւղանկարներով, կուշշով, կանեփահիւս կերպասներով եւ թուղթի ու փայտի համադրումներով:

Վեց գոլաժներ, ստեղծուած աւազագոյն թուղթերով, կտրտուելով, շերտ-շերտ դասուելով՝ կ'ոգեկոչեն աւազակոյտեր. որոնք մերթ կը սեղմուին, մերթ կը տարածուին սպիտակ դղեակին շուրջ: Երբեմն սեւ շուքեր կը բաժնեն աւազի անհունը ու քառանկիւնածել դղեակը կը հեռանայ իր արտաքին ձեւէն, կը բաղադրուի իւրաքանչիւր աւազահատիկին հետ, յառաջ կ'ու գայ շարժումը՝ ուրիշը: Ստեղծագործողը եւ գործը կը գտնեն իրենց ներքին կապը: Դղեակը գոլաժէն կը սեղափոխուի ու կը դառնայ երկարաշունչ ստեղծագործութեան մը հիւլէն: Մեղեդին կը զարգանայ ու կը դառնայ համանուագ: Արուեստագէտը կը կառուցանէ իր ոգեկան պահանջներուն համաձայն ու էլէմենթ-գոյն յարաբերութիւնը ծնունդ կու տայ հրաշալի ներդաշնակութեան մը: Արուեստը կը տարածէ իր ազատութիւնը:

Ինը գործերէ կազմուած քոմպոզիտիւն մը, ներկուած կտաւներով, ուր կապոյտը կը խտացնէ երկինքի մը անհունութիւնը, որ կ'երթայ մինչեւ հողանիւթ սրճագոյնը: Գոյն, լոյս: Լոյսի հեղեղ, որ կեանք կուտայ գոյներուն, կ'օժտէ ուրիշով, մերթ

մեղմիկ ու մերթ գօրեղ: Քարագած երաժշտութիւն, անապատային լուսութեան մէջ շշուէշով արտասանուած բանաստեղծութիւն: Քառակներ պատմելու համար գեղեցկութիւնը՝ դղեակին. աւազ դարձած մեռած ծաղիկներուն, երկինքի լուսաւոր ժպիտին ու գիշերուան խորհուրդին մասին: Ժամանակի անհունը, որմէ ծնունդ կ'առնէ էլէմենթը ու կը յաւերժանայ: Ու մեր աչքերը կը յառին մերթ կապոյտ պաստառին, յետոյ մոխրագոյն դարձած դղեակին, ապա դեղնասրճագոյն տարածութեան, որմէ ետք մերթ կու գայ դղեակը, մերթ ածխագոյն մուկը, նորէն դղեակը՝ այս անգամ փոքր ինչ վարդագոյն, որմէ ետք կը հանգչի աւազին մէջ: Այս վերջին պաստառին մէջ դղեակը գրեթէ աննիւթացած է, հազիւ կը նշմարուի շեղ գիծով մը եւ երկու փոքրիկ քառակուսիներով:

Ուրիշ քոմպոզիտիւն մը, այս անգամ կազմուած հինգ ներկուած պաստառներէ, որուն մեկնակէտը նորէն կապոյտն է: Կը կատարուի յայտնութիւնը դղեակ-էլէմենթին՝ հողանիւթ դարձած: Եռախօսութիւն մը՝ երկինքի, դղեակի եւ հողի համար:

Մեղեդին կը շարունակէ զարգանալ: Կանեփահիւս կտորներով շարք մը, ներկուած ու իրարու կարուած, ուր աւազագոյն դղեակը, երբեմն ճերմակ լոյսով շրջապատուած՝ մէջտեղն է, իրարու յաջորդող գոյներով, մեղմօրէն օրօրուն: Կապոյտէն դէպի հողագոյնը՝ ուրիշը յաջորդական-ութեամբ, կը կամրջեն արշալոյսն ու մայրամուտը:

Չորս պաստառներ, դարձեալ ներկուած, նարնջագոյն ու աւազագոյն: Դղեակը եւ մարդը: Երկու պաստառներու մէջ մարդիկ կը դիտեն կառոյցը, երբեմն անտարբեր, երբեմն հետաքրքիր: Դիտակը կը մօտենայ, դղեակը կը մեծնայ, քով-քովի կեցած մարդիկը կը հեռանան: Դղեակը կը շրջուի, ուղղահայեաց դիրք մը կ'առնէ, կը մնայ մէկ հոգի, ան՝ որ որոշած է հաղորդուել խորհուրդին: Վերջին հանգրուանն է. մարդկային գլուխը բոլորովին շրջուած է, լոյս կը շողայ անոր շուրջ, ընդունած է խորհուրդը ու պատարագը՝ կատարուած:


Ու ահա կու գայ տասնըվեց կտորներէ կազմուած խժանկար մը, տարբեր չափերու ու ձեւերու կտաւներով, ուր գմայլելի պարզութեան մը մէջ՝ մաքրութիւն ու լոյս կը

տարածուի: Պզտիկ պատուհան մը՝ պատի մը մէկ ծայրը, կառոյցէն մասնիկ մը, որ հիւլէ մըն է ինքնին, դուռ մը, աստիճան մը, կնոջական ուրուագիծ մը, մոտիւ մը՝ առանձին-առանձին ունին ձայնանիշի մը վճիտութիւնը, որոնք միասնաբար կը կառուցեն մեղեդի մը, իեռուներէն եկող սրինգի մը նուագը՝ յուզիչ, սրտագրաւ: Երկնակապոյտին վրայ բացուող պատուհան մը, որ տարածականօրէն կը սահմանաւորէ քառակուսիի մը մէջ՝ անհունին մէկ մասնիկը: Երկրաչափական ձեւերը կը խտացնեն ոգեկան ուժերը, կ'ապահովեն անոնց ճշգրիտ կշռոյթը: Շանթ կարելոր կը համարէ քառակուսին, որպէս հաւասար ուժեր ամփոփող ձեւ: Ան ներկայ է, պատուհանի ձեւով, շարքին տասնմէկ պաստառներուն մէջ, մերթ ոսկեգոյն ճառագայթ մը հաւաքած, մերթ երկինքի կտոր մը, մերթ երազ մը գրկած: Այս շարքին վերջին քառակուսին փայտէ դոնակ մըն է՝ գոց, որուն առջեւէն կ'անցնինք հրածեշտ տալով:

Երկու շարք, չորսական պաստառներէ կազմուած, իւղանկարներ են: Առաջին չորսը,

որուն երեքը՝ քով-քովի իրարու կոնակ տուած տուններ են, ուրկէ տխուր մոխրագոյն հով մը կ'անցնի, շրջապատելով զանոնք: Հողագոյն պատ մը՝ սեւ դոնակով մը, որուն կոնակի ճեղքմակ գմբէթը յոյսի ճրագ մըն է, որ կը փորձէ փարատել թախիծը: Ու ահա, երկինքն ու հողը մասամբ կը իեռացնեն տխրութիւնը, կ'երեւայ արմաւենի մը, որուն ճիւղերը կ'երկարին տնակներուն ետեւէն: Ահա դէմ-յանդիման կու գանք դղեակին, որ առանձին պաստառ մը գրաւած է, աւագագոյնի բոլոր երանգներով: Երբորուն, տեսիլքի մը պէս դիւթական, ան՝ յարութիւն կ'առնէ աւագներէն, կը մարմնանայ ու կը բացուի երկինքի անհունին:

Երկրորդ շարքի չորս պաստառները ամբողջովին նուիրուած են դղեակին: Պարզ, շատ պարզ կառոյց մըն է, ճեղքմակ երեսապատումով, քով-քովի բացուած պզտիկ ճեղքերով, անապատային դղեակ մը՝ ընդմէջ հողին ու երկինքին: Այստեղ ան անջատուած է իր արտաքին ձեւէն, կապտամոխրագոյն



Գուլած 50սմ. x 50սմ.

փայտ, ներկուած թուղթ եւ կուշ

տարածութիւն մըն է, պաստառին շորս անկիւններուն մէջ սեղմուած, մեղմօրէն գունաւորուած պտիկ պատուհաններով՝ մեղքեր որոնցմէ ներս կ'ուզես անցնիլ, թափանցել, մաս կազմելու համար այս իրականութիւն-երագին: Դղեակը հոս կը գտնուի իր իմաստային բարձրակէտին մէջ, ամփոփուած, խտացուած, պատրաստ՝ ընուլթեան հետ համայնանալու:

Արմաւենիի ճիւղերու շերտաւորումներով ստեղծուած կոմպոզիտիւն մը՝ վեց կտորներէ կազմուած, հետաքրքրական ուսումնասիրութիւն մըն է: Քառակուսիներու ետեւէն, ու երբեմն վրան, ամրացուած են թուղթէ պատտիկներ՝ երկինքի կտոր մը, անապատէն բուռ մը աւազ, լոյս, խաւար: Կան թուղթ-մասնիկներ, որոնք կարելի է շարժել, մասնակից ըլլալու համար նաեւ շօշափելով: Տպաւորիչ շարք մը, գաղափարի գարգացումը՝ ստեղծագործական եզակի երեւակայութեամբ մը:

Շանթ Աւետիսեանի էլ-Քասր նկարաշարը, որ առայժմ կը բաղկանայ տասներկու շարքերով՝ եօթանասուն պաստառներէ, կը պրպտէ ու կը ներկայացնէ դղեակ-էլէմենթը, գոյնի կու տայ խորհուրդ, լոյս, ապրում: Ատոր հասնելու համար կտաւները կը թափուին գոյներու մէջ, թուղթերը կը կտրտուին, կանեփահիւս կտորները կը կարուին, արմաւենիի շիւղերը իրարու կը հիւսուին, նիւթն ու նիւթեղէնը իրարու կը շաղուրուին, փոխի փոխ հանդէս կու գան՝ ներքին ծայր լսելի կ'ըլլայ:

Շանթ Աւետիսեան էլ-Քասր նկարաշարով արդէն իրագործած է արուեստի իր ճակատագիրը:

շարունակութիւն էջ 7 էն

ամէնքն ալ բարեձեւ են, ինչո՞ք, ինչպէ՞ս, որովհետեւ ամէնքն ալ շարժման մէջ են: Կոզգաս թէ ազատութեան շունչ մը կայ ամենուր:

Արդարեւ ազատութեան հայրենիքն է ֆրանսան: Եւ այդ ազատութեան արձագանգը տակաւին կը հնչէ ականջիս մէջ:

Սպանիան ու սպանացին ծանչնալու հնարաւորութիւններս աւելի քիչ էին: Սպանիոյ մէջ Լառէտօ ամառանոցն էի, հիւսիսը, ուր ծովը կը խառնուի անտառին ու լեռան եւ այցելուին կը պարզէ շատ գեղեցիկ տեսարաններ:

Սպանիան թէեւ արեւմտեան է իր աշխարհագրական դիրքով, բայց ունեցած բարբերը արեւելեան են: Մարդիկ առ հասարակ բարձրածայն կը խօսին եւ ոչինչ բանի մը համար պատրաստ են կոխիլ: Սպանիան խառնուրդ մըն է արեւելքի եւ արեւմուտքի:

Ինչ աղուոր բան է ծամբորդութիւնը: Կ'երթաս, ուրախութեամբ կ'երթաս նորութեան ծարաւով եւ ուրախութեամբ կը վերադառնաս՝ բարեկամներու եւ ընտանիքի կարօտով:

ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը.Մ.Ի
ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Ուրբաթ, 28 Մարտ 1980-ին տեղի ունեցած տարեկան անդամական ընդհանուր ժողովէն բխած վարչութիւնը, ընտրեց իր ղեկանը հետեւեալ կերպով.

ՊՊ. Յակոբ Էքսերժեան	Ատենապետ
Ժորժ Միրայէլեան	Բ. Ատենապետ
Նորայր Տէօվլէթեան	Ատենադպիր
Մարտիկ Պալաեան	Գանձապետ
Վահան Չէչմէնեան	Խորհրդական
Յովհ. Տրնկմեան	, ,
Յակոբ Բամպուրժեան	, ,

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆ

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ Հ.Բ.Ը.Մ.Ի
ՆՈՐԱԿԱԶՄ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Տարեկան անդամական ընդհանուր ժողովը գումարուած 13 Ապրիլ 1980-ին, ընտեց նոր վարչութիւնը, որ իր ղեկանը կազմեց հետեւեալ ձեւով.

Տորթ. Կարօ Անսուրեան	Ատենապետ
ՊՊ. Նազարէթ Գարթալեան	Փոխ Ատենապետ
Մինաս Պանտոյեան	Ատենադպիր
Կարօ Էսէրեան	Գանձապահ
Վրէժ Սէֆէրեան	Խորհրդական

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆ

ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ Հ.Մ.Ը.Մ.ՆՈՒՊԱՐԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Կիրակի, 8 Յունիս 1980-ին գումարուած անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած նոր վարչութիւնը կազմեց իր ղեկանը հետեւեալ ձեւով.

ՊՊ. Գրիգոր Շահպէտէրեան	Ատենապետ
Հրանդ Թուֆայեան	Ա. Փոխ Ատենապետ
Սիմոն Օ. Սիմոնեան	Բ. Փոխ Ատենապետ
Հրաչ Սիմոնեան	Ատենադպիր
Պօտոս Աբգարեան	Գանձապահ
Պերժ Թէրզեան	Խորհրդական
Անդրօ Վարժապետեան	Խորհրդական

Իր կարգին, վարչութիւնը որպէս օժանդակ ընտրեց հետեւեալ երիտասարդները.

ՊՊ. Կէորզ Բրուտեան
Վահէ Վարժապետեան
Ժիրայր Տեփոյեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԺԻՐԱՅՐ ՏԵՓՈՅԵԱՆԻ ԻՆՏ



Գէորգ Բրուտեան

Ժիրայր Տեփոյեան տարիներ շարունակ համրապետը եղած է Հ.Մ.Ը.Մ.-նուպարի պատրէթ-պոլի խումբին: Իր համրապետութեան շրջանին խումբը իսպառու շարժումներ արդիւններ արձանագրած է համահայկական մրցումներուն: Ժիրայր Տեփոյեան անցեալ տարի հրաժարեցաւ մարզական կեանքէն:

«Տրիտասարդական Տեղեկատու»ի համար իրեն հետ ունեցանք հարցազրոյց մը՝ զոր ստորեւ կը հրատարակենք:

Հարց. 1. - Ո՞րն է ամենայնօրոյց մրցումը որ խաղաղիր Հ.Մ.Ը.Մ.-նուպարի խումբին հետ, ո՞ր թուականին եւ ո՞ր խումբը յաղթական հանդիսացաւ:

Պատ. 1. - «Կամբ»ի կազմակերպած մրցաշարքին «Արարատ»ի դէմ մրցում մըն էր, 1975-ին: Արդիւնքը 60 - 60 հաւասար էր: Մրցումը վերջանալուն քանի մը երկուսայրկեան մնացած, մրցակիցին գիծերը ճեղքելով կը յառաջանայի, երբ մրցակից խումբէն կատարուած սխալի մը հետեւանքով, երկու ազատ քաշուածքի իրաւունք ստագայ: Զտուջացած ժամանակ իրաւարարը արդէն սուլած էր եւ մրցումը վերջացած ըլլալուն երկու քաշուածքներէն մէկը արդէն բաւարար էր որ յաղթական ըլլայինք: Այդպէս ալ եղաւ: Առաջին քաշուածքը արձանագրելով մրցումը յաղթեցինք 61 - 60 արդիւնքով:


Հարց. 2. - Ըստ քեզի, որոնք են ներկայիս ամենալաւ հայ պատրէթպոլիստները, որոնքմէ կարելի ըլլայ հայկական հաւարական խումբ մը կազմել որ մասնակցի եզրիպտական ֆէտէրասիոնի մրցումներուն:

Պատ. 2. - Խաղը քաշիող՝ Պերմ Միսքմեան (Կամբ), ծախ՝ Կարօ Արզարեան (Հ.Մ.Ը.Մ.-նուպար), աջ՝ Համբօ Բարեսէրեան (Նիր-Իսթ), կեդրոնական խաղաղողներ՝ Վարդան Գագանճեան (Արարատ), Վիգէն Վարժապետեան (Հ.Մ.Ը.Մ.-նուպար): Այս անունները պարզապէս իբր օրինակ յիշեցի, կարելորդ հաւարական խաղն է եւ գիրար հասկնալը դաշտին վրայ:

Հարց. 3. - Ի՞նչ զգացիր, կամ ի՞նչ տպաւորութիւն ունեցար, երբ քու հրաժարմանդ առիթով, առաջին անգամ ըլլալով, մասնաւոր մրցում մը տեղի կ'ունենար:

Պատ. 3. - Պէտք է ըսել, որ դժուար միծակ է մարզիկի մը համար դաշտէն հեռանալը: Այն մրցումը որ խաղաղուեցաւ հրաժարման առիթով՝ եւ այն բաժակը որ նուիրուեցաւ «հայ մարզիկներ»ու կողմէ, ինչպէս վրան արձանագրուած է, ամենամեծ զոհագումն է որ մարզիկ մը կրնայ ունենալ իր հրաժարտի վայրկեանին: Հ.Մ.Ը.Մ.-Արարատի մարզիկներուն ամբողջական մասնակցութիւնը այդ մրցումին յայտնապէս հաստատեց, թէ անոնք իմ եղբայրներս են: Այդ օրը իսկապէս անմոռանալի պիտի մնայ ինծի համար:

Հարց. 4. - Այժմ որ մարզական խումբին մաս չես կազմեր, մտադի՞ր ես օժանդակութիւնդ քերել որեւէ ձեւով, ինչպէս օրինակ վարչութեան մաս կազմելով:



Պատ. 4.- Օգտակար ըլլալ Հ.Մ.Ը.Մ.- նուպահին՝ ինծի համար պարտականութիւն մըն է, որուն պատրաստ եմ:

Հարց. 5.- Արդեօք կարելոր կը գտնե՞ս հայկական հաւարական խումբի մը մասնակցութիւնը ֆէտէրասիոնի մրցումներուն:

Պատ. 5.- Այո, կարելոր կը գտնեմ այդ մասնակցութիւնը, բայց կ'ուզեմ որ մասնակցող խումբը գորաւոր ըլլայ, քանի որ ան պիտի ներկայագնէ հայ խումբը յաջս եզրիտական խումբերուն եւ ժողովուրդին: Մեր տկար կէտը մասնաւորաբար կը կայանայ քանակին մէջ. ֆէտէրասիոնի մրցումները տեղի կ'ունենան ծմեոր եւ այդ եղանակը ուսումնական շրջան է, շատեր չեն կրնար կանոնաւոր կերպով փորձերուն հետեւիլ եւ մրցումներուն մասնակցիլ: Ներկայիս մեր գաղութը կը հաշուէ 6 մարզական ակումբ, իւրաքանչիւրը 10 մարզիկներով, ընդամենը՝ 60 մարզիկ: Այդ 60 մարզիկներէն եթէ 12 մարզիկ տրամադրելի ունենանք ուսումնական շրջանին՝ քանակի հնդիրը լուծուած կ'ըլլայ:

Հարց. 6.- Ի՞նչ խորհուրդ կու տաս նորահասներուն, լաւ մարզիկներ ըլլալու համար:

Պատ. 6.- Նորահաս մարզիկները պէտք է քանան ձեռք ձգել արագութիւն, ըլլայ վագրի թէ հաղարկութեան մէջ, ինչպէս նաեւ բարձր ուսում եւ այս բոլորը կանոնաւոր կերպով փորձերուն հետեւելով: Ասոնցմէ գատ, որեւէ մրցումի ընթացքին պէտք է շատ պաղարիւն ըլլալ: Նորահաս մարզիկները պարտին հեռու մնալ ֆիզիքական առողջութեան վնասող արարքներէ:

Հարունակութիւն էջ 8 էն

Ես չեմ մտածեր այս երկիրներէն հեռանալու մասին: Ժիշդ է, հոս ալ ձուլում կայ, անշուշտ նուազ եւ աւելի դանդաղ: Հոս ալ անկազմակերպ ենք, բայց հոս աւելի կարելիութիւններ կան ձուլման դէմ պայքարելու: Երանի թէ կազմակերպուած ձեւով պայքարէինք: Ես, որպէս եզրիտակայ, կը զգամ թէ մեզմէ իւրաքանչիւրը պարտականութիւն մը ունի կատարելիք այդ ուղղութեամբ: Ես պատրաստ եմ իմ բաժինս բերելու:

Մեր հայրենիքը ինչ դժուարութիւններու դիմադրեց, ինչ տառապանքներէ անցաւ: Հի բաւեր հպարտանալ Հայաստանով: Հայրենիքը մեզի համար պէտք է ըլլայ ամէնօրեայ ներշնչման աղբիւր եւ օրինակ:

Տե՛ղե՛ք ԱՏՌԻՆ վճարովի չէ:

Շնորհակալութեամբ կ'ըմբռնեմք նուիրատուութիւններ, մեր այս ձեռնարկը աւելի ճոխ եւ Եանկան ըմբայելու համար:

— Ասանալու համար դիմել խմբագրութեան, 15, Էմաս Էլ Տիմ փողոց Ա. յարկ — Գահիրէ

ԱԼ ՏԱՐՊ ԱԼ ԱՀՄԱՐ

Սօսի Ներէտեան

Քաղաք մը ուսումնասիրելը՝ յայտնաբերելու համար այն ներքին կապերը որոնց միջոցաւ քաղաքը կը պահէ իր միութիւնը, նարաւոր է՝ անձամբ պարելով քնակիչներուն հետ: Սակայն Գահիրէի պէս ընդարձակ ու բազմամարդ քաղաքի մը պարագային այս տեսակ մանրամասն ուսումնասիրութիւն մը կը ներկայագնէ բազմապիսի դժուարութիւններ: Հարթելու համար նման դժուարութիւններ, հարկ է կեդրոնանալ մասնաւոր թաղամասի մը վրայ եւ տրամաբանական լուծում մը գտնելէ ետք՝ ընդհանրագնել գայն ամբողջ Գահիրէի համար: Հասկնալու համար այն փոքր մշակոյթները, որոնք կը գտնուին Գահիրէի մեծ մշակոյթէն ներս, քննութեան առարկայ եղած է Ալ Տարպ Ալ Ահմար թաղամասը: Հիմնուելով եղած ուսումնասիրութիւններուն վրայ, պիտի իործեմ ներկայագնել գայն:

Ալ Տարպ Ալ Ահմար թաղամասը, որ կը գտնուի Ազհարի եւ Սիթատելի միջեւ, անցած է պատմական շրջաններէ, եւ իր բազմամարդութեամբ մանրանկարն է Գահիրէի: Ալ Տարպ Ալ Ահմարի փողոցներէն մէկուն ուսումնասիրութիւնը գոյց տուաւ թէ 117 ընտանիք կը բնակի այդ փողոցը եւ թէ ընտանիքի մը միջին թիւն է 5.5 հոգի. այս թիւը քիչ մը շատ կը թուի քաղաքաբար Գահիրէի, ուր ընտանիքներուն միջին թիւը 5 հոգի է: Տարպ Ալ Ահմարի ընտանիքները բաժնուած են երկու տեսակի. կորիզային եւ նահապետական: Կորիզային ըսելով կը հասկնանք ընտանիք մը, որ կը բաղկանայ մայր, հայր եւ զաւակներէ. իսկ նահապետական ընտանիք կը նշանակէ՝ մայր, հայր եւ զաւակներէ գատ նաեւ մեծ մայր, մեծ հայր, հօրաքոյր, մօրաքոյր եւ այլն:

Տարպ Ալ Ահմարէն ներս նահապետական ընտանիքներու գոյութիւնը ունի իր պատմաոնները: Զաւակներու փոխանակումը սովորական երեւոյթ մըն է ընտանիքներու միջեւ: Յաճախ կը պատահի, որ տարիքոտ ամուսնի իրենց ազգականներուն մէկ փոքրիկ մանչուկը կամ աղջիկը իր կ'առնեն, որպէսզի օգնական մը ունենան: Տան մը տիրոջ անդամներէն կը սեպուին սպասուհիները, կամ՝ գործատեղիի անդամները, ինչպէս օրինակ սրճարանի սպասուհիները, որոնք ընտանիքի անդամներուն հետ կը ճշշեն եւ յաճախ նոյն տան մէջ կը բնանան: Թաղին ընտանիքներուն մեծ մասը ազգականական կապերով կապուած են իրարու: Ընդունուած, նոյնիսկ

ուունքը: Անշուշտ ասիկա չի նշանակեր, որ այլեւս կինը ամուսինին անհնազանդ կրկնաշար կամ չի յարգեր զայն, այլ՝ որոշում անհանձնելու, կարծիք յայտնելու իրաւունքը կ'ունենայ: Նոյնիսկ ուսումը ուժ չի տար անձին: Աղջիկ մը, որ համալսարան կը յաճախէ, իր հօր եւ նոյնիսկ փոքր եղբօր իշխանութեան տակ է, մինչդեռ աշխատող աղջիկ մը ունի շատ մը ազատութիւններ: Այս պատճառաւ է որ աշխատաւոր դասակարգի կիները բաւական լաւ դիրք ունին տուներէն ներս, քանի որ գործի մէջ կ'օգնեն իրենց ամուսիններուն: Նոյնիսկ փոքր տղաք կրնան բաւական ազատութիւններ վայելել, երբ սկսին աշխատիլ եւ դրամ շահիլ:

Այսպէս, կը հասնինք այն եզրակացութեան, որ ուսումը, գործը եւ ընտանիքը երկրորդական ազդակներ են դրամին եւ հարստութեան քով եւ որովհետեւ այր մարդիկն են դրամ վաստկողները, ուժ եւ իշխանութիւն կը մնան կեդրոնացած այր մարդոց ձեռքերուն մէջ:

Այլ Տարպ Այլ Ահմարի բնակիչները չեն մտածեր ինայողութեան մասին: Այր մարդիկ շատ կ'աշխատին եւ ամբողջ շահածնին կը ծախսեն օրը օրին: Ժողովուրդին ընդհանուր համոզումը հետեւեալն է. քանի որ վաղը կրկին պէտք է աշխատինք ու դրամ վաստկինք, ուրեմն ինչու չծախսենք այսօրուան շահած-

նիս: Սակայն անգամ մը որ տան այր մարդը հիւանդանայ կամ անկարող ըլլայ աշխատելու՝ ընտանիքը պարտքերու տակ կ'իյնայ: Թաղին անդամները հազիւ թէ լսեն, որ այս տեսակ դժբախտութիւն մը պատահած է իրենց մէկ բարեկամին, անմիջապէս օգնութեան կը հասնին եւ թոյլ չեն տար որ ընտանիքի անդամներէն մէկը ձեռք երկարէ իրենց, որովհետեւ ամէն մարդ գիտէ թէ այս տեսակ փորձանք ոեւէ մէկուն կրնայ պատահիլ:

Այլ Տարպ Այլ Ահմարը հետաքրքրական թաղ մըն է: Հետաքրքրական են նաեւ միւս քոլոր թաղերը: Այլ Տարպ Այլ Ահմարը ունի իր մասնայատուկ կերպերը՝ արտայայտելու ուրախութիւնն ու սուգը, ընկերային եւ ընտանեկան կեանքի վիճակները, որոնք պարզօրէն կը պատկերանան իրենց ամէնօրեայ կեանքին մէջ:

Մարդ արարածը կ'ազդուի իր միջավայրէն, կ'ազդէ իր միջավայրին վրայ եւ կը պայքարի իր գոյութեան համար: Բայց նաեւ Արեւելքի մէջ կը համակերպի իր ճակատագրին: Այդ տեսակէտէն յատկանշական օրինակ մըն է Այլ Տարպ Այլ Ահմար թաղը: Անշուշտ պիտի գայ օրը, երբ պիտի փոխուին կեանքի պայմանները եւ հետեւաբար պիտի փոխուի մարդոց մտածելակերպը: Այլ Տարպ Այլ Ահմարը իրական պատկեր մըն է, որ կը ներկայացնէ կեանքը՝ իր անգիտութեանը եւ պարզութեանը մէջ երջանիկ ժողովուրդի մը:

ՀՐԱԽԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական վարչական ժողովը այսու կը հրաւիրէ Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 67րդ Ընդհանուր ժողովին. որ պիտի գումարուի Ուրբաթ, Հոկտեմբեր 31, 1980, երեկոյեան ժամը 5ին, Հ. Բ. Ը. Միութեան Պուէնս Այրէսի Կեդրոնին մէջ, 1322 Ասէվէտօ փողոց, Պուէնս Այրէս, Արժանքին:

Ներկայս 67րդ Ընդհ. ժողովին համար տրուած միակ հրաւիրագիրն է: Կը խնդրենք հետեւաբար Միութեան յարգոյ իրաւասու անդամներէն, որ անձնապէս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ բնականիւն եւ կամ ամենէն ուշը մինչեւ Հոկտեմբեր 8, 1980 իրենց փոխանորդագրերը յանձնեն Հ. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Տնօրէնին կամ գանձմէ գրկէն հետեւեալ հասցէին:-

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
CENTRAL BOARD OF DIRECTORS
628 Second Avenue, New York, N. Y. 10016

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ներկայացում եւ վաւերացում 1979 տարեշրջանի ընդհանուր տեղեկագրի:
2. Ներկայացում եւ վաւերացում 1979 տարեշրջանի ընդհանուր հաշվետուութեան:
3. Մասնակի ընտրութիւն Կեդրոնական վարչական ժողովի:
4. Մասնակի ընտրութիւն Հաշուեմեկից Յանձնախումբի:
5. Առաջարկներ եւ թելադրութիւններ:
6. Գնահատամբի բանձներ:

Ի ԳԻՄԱՑ ԿԵԴՐ. ՎԱՐՁԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ի. Բ. ԿՐԵԿԸՐԻ Ատենադպիր Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ Նախագահ